

պատանին, որ դեռ երիտասարդութեան չէր հասած եւ հօր մը ժպիտով կը նայէր իւր քերց վրայ եւ կը գուրգուրար:

Ընտանիքն ամենքը միաբան իջան նախաճաշն ընելու, Սուրեն լուռ էր, վասնզի չէր ուզէր իւր քոյրը տխրեցնէի Գրիգոր երբեմն կը խոսէր, բայց Արփենին միշտ նիւթ կը գտներ խօսելու եւ հարցնելու: Սեղանատունէն վար կ'երեւար գեղեցիկ փոքրիկ լիճը արծաթի սկաւառակի մը պէս, մակոյկ մը լճակը կապուած իբր թէ կը հրաւիրէր պտոյտ ընելու ծառազարդ եւ ծաղկազարդ ափանց վրայ. բայց ոչ ոք այդ մտածութիւնը չունէր. Սուրեն առաջինն ելաւ սեղանէն՝ նոյնպէս ամենքը, եւ Արփենի ամենէն վերջ, միայն նա էր, որ չէր զգար թէ սպառնալից փոթորիկ կար օդին մէջ:

Խեղճ մայր, գիտէր, որ զաւակն իրմէ պիտի բաժանուէր, եւ այս անգամ ինք չէր, որ կ'ուզարկէր, այլ ստիպող յարկը՝ մահահոտ պատերազմի շռիւթն էր, որ իր գրկէն կը կորզէր իր միմիայն յոյսը: Ուստի կորագլուխ անձայն զոհի պէս տեսաւ նորա սպառազինիլը, այլեւս արտասուք չի կար աչքերը, վասնզի սիրտն էր, որ կուլար, եւ երբ սանդուխին դուռն որդուոյն ձեռքերն եւ երեսները համբուրեց եւ ինք աչքերը գոց երկայն գրկախառնութիւն մ'ըրաւ, մէկը չէր կրնար որոշել աղօթք էր թէ գրկախառնութիւն:

Քսանի չափ հեծեալ սպառազէնք Գրիգորի կը սպասէին, երբ նա էլ հեծաւ եւ առանց գլուխը դարձնելու ելաւ բերդին դռնէն դուրս Սուրենի ետեւէն.

— Չաւէ՛ն, Չաւէ՛ն,— կանչեց ներդաշնակ ձայն մը վերէն:

Մեզ ծանօթ անձնապահապետը դարձեալ մտաւ, եւ տեսնելով թէ Տիկինը չի խօսիր, իջաւ ձիէն, ելաւ սանդուխն երէն վեր:

— Չաւէ՛ն, քեզի նեղութիւն տուի, բայց մօր մը տկար սրտին ներէ. աւելորդ է քեզի յանձնել, բայց խնդրեմ հսկէ զակիս վրայ,— ըսաւ Տիկինը:

— Ո՛հ իշխանուհի, առանց իշխանիկին հաւտա՛ թէ Չաւէն աչացոյ չերեւար:

— Աստուած հետերնիդ լինի...— կրցաւ միայն գրուցել խեղճ կինը եւ գլուխը դարձուց դէպի դուռը. էլ չէր կարող: Շուկուեցաւ դէպի եկեղեցին եւ հոն իւր վիրալից մայրենի սիրտը տարածեց ստեղծողին՝ միմիայն մխիթարիչ ցաւերու:

Ծեր զինուորը մօր մը այս կերպարանքին չի կրցաւ դիմանալ, գլուխը շարժելով, աչքերը սրբելով հեծաւ եւ մտրակեց եւ փոշուոյ ամպի մէջ անհետացաւ եւ